ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

Անհրաժեշտությունը. Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ընթացիկ տարում ուժի մեջ մտած Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի գծով ընթացիկ տարվա համար նախատեսվող մուտքերը և ելքերը, ինչպես նաև կայունացման դեպոզիտային հաշվից ՀՀ կառավարության մի շարք որոշումներով տրամադրված բյուջետային վարկերի ընթացիկ տարում տրամադրված կամ տրամադրվելիք և դրանց վերադարձից ստացված/ ստացվելիք՝ պետական բյուջեով չնախատեսված գումարները, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում ներառելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

1. 2011 թվականի հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրված «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային համաձայնագիրը (24.0 մլն ԱՄՆ դոլար, N IBRD 7963) ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 18-ին, ներառելով «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագիր» ծախսային ծրագրի (N PPA-P457 ծրագրի նախապատրաստման կանխավճարի վարկային համաձայնագրի) շրջանակներում իրականացված ծախսերը:

«Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» ծրագրի գծով համապատասխան հատկացումները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված են «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագիր» ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների կազմում:

«Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրի բնականոն ընթացքը անցումային շրջանում չխաթարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանելու, որ «Հայաստանի

Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածով նախատեսված «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագիր» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին ընթացիք տարում իրականացվում են ծախսեր նաև «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրի գծով:

2. Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված միջպետական վարկի միջոցների հաշվին

- ՀՀ կառավարության 26.06.2009թ. N 717-Ա որոշմամբ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին նախատեսվել է հատկացնել 6.4 մլրդ դրամ, որի դիմաց ս.թ. հունվարի 1-ի դրությամբ հատկացվել է 1.2 մլրդ դրամ: Ընթացիկ տարում կայունացման դեպոզիտային հաշվից ս.թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի տրամադրվել է 0.6 մլրդ դրամի, իսկ ս.թ. հուլիսի 12-ի դրությամբ՝ 0.8 մլրդ դրամի չափով բյուջետային վարկ և մինչև տարեվերջ կանխատեսվում է ևս մինչև 1.8 մլրդ դրամի չափով վարկերի տրամադրում,

- 20.01.2011թ. N 26-Ա որոշման համաձայն «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում (ՀՀ կենտրոնական բանկի միջոցով) կայունացման դեպոզիտային հաշվից բյուջետային վարկի տեսքով ս.թ. առաջին կիսամյակում փաստացի տրամադրվել է 1.0 մլրդ դրամ (որոշմամբ նախատեսված ամբողջ գումարը),

- 20.05.2011թ. N 681-Ա որոշմամբ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին նախատեսվել է տրամադրել 50.6 մլն դրամի չափով բյուջետային վարկ:

Դրա հետ մեկտեղ, Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված միջպետական վարկի միջոցների հաշվին ՀՀ կառավարության զանազան որոշումներով տրված բյուջետային վարկերի վերադարձից ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արդեն իսկ ստացվել է շուրջ 2.4 մլրդ դրամ մուտքեր և մինչև տարեվերջ սպասվում է ստանալ ևս շուրջ 2.6 մլրդ դրամ:

Բյուջետային վարկերի վերը նշված հատկացումները, ինչպես նաև վարկերի վերադարձից վերը նշված մուտքերը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն, ուստի անհրաժեշտություն է առաջացել դրանք արտացոլել պետական բյուջեում, որի համար կան անհրաժեշտ իրավական հիմքերը (նշված օրենքի N 4 հավելվածում և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի

N 1748-Ն որոշման N 1 հավելվածում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու եղանակով):

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Նախագծով չի նախատեսվում գործող բյուջետային քաղաքականության փոփոխություն: Նախագծով առաջարկվող փոփոխությունները իրականացվելու են «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ կետին և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման 4–րդ կետի 24-րդ ենթակետին համապատասխան:

Կարգավորման նպատակը և բնույթը. Կարգավորման նպատակը «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրի գծով բյուջետային մուտքերի և ելքերի, բյուջետային վարկերի վերը նշված հատկացումների, ինչպես նաև վարկերի վերադարձից վերը նշված մուտքերի արտացոլումն է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում:

Ակնկալվող արդյունքն է՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության» ծրագրով ընթացիկ տարում նախատեսված աշխատանքների սահուն կերպով իրականացումը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված «բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության» սկզբունքի իրացումը և որոշակի տեխնիկական բնույթի ճշգրտումների կատարումը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և նախագծի մշակման գործընթացում այլ ինստիտուտներ և անձիք չեն ներգրավվել:

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխությունների կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջացնում: Նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Իրավական ակտն ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

Նախագծի ընդունմամբ << 2011 թվականի պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների, ծախսերի և ծրագրային ցուցանիշները, ինչպես նաև դեֆիցիտի ֆինանսավորման զուտ ծրագրային ցուցանիշների փոփոխություն չի առաջացնում: Միաժամանակ, տեղի է կունենա կայունացման դեպոզիտային հաշվի զուտ մուտքերի ավելացում՝ շուրջ 1.7 մլրդ դրամով:

Ելնելով Նախագծի բնույթից պետական բյուջեում ազդեցության գնահատման, հասարակության մասնակցության մասին տեղեկանքի և նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների ընդունման կամ չընդունման վերաբերյալ ամփոփաթերթի սահմանված ձևաչափը սույն նախագծի դեպքում կիրառելի չէ: